դութեամբ պատուեալս, զորս Հոգին սուրբ հաւասար իշխանութեամբ և շնորհօք զարդարեաց։ Եւ զի զԱթոռն Հռովմայ բացայայտ հռչակէ 'ի թղթին կեդրոն միութեան, զորպիսի վարդապետութիւն ոչ ընդունի սուրբ և ուղղափառ եկեղեցին Հայաստանեայց ընդ այլոց ազգաց Արևելեան եկեղեցեաց՝ Գլուխ Եկեղեցւոյ զփրկիչն մեր միայն՝ զՔրիստոս ճանաչելով։

Նա որ խնդրէ զՄիութիւն Եկեղեցւոյ, զանց արարեալ զկարի կարևորօք, ոյք պարտ էին լինել անյեղլի հիմն գումարման ժողովոյն, իւրովի կարծեցեալ միապետական գերիշխանութեամբ ինքն իսկ ևսքան զևս հեռանայ 'ի միութենէ կաթողիկէ Եկեղեցւոյ. և ո՞ւմ չիցէ յայտնի՝ թէ յորպիսի սկզբանց հակառակելոց իմաստից ողջամիտ վարդապետութեանց սրբոյ Աւետարանին, դժուարին է ակնունիլ ճշմարիտ միութեան, թերևս նորանոր վէճից և անդարմանելի պառակտմանց ևս և դառնագին հակառակութեանց բացցին ասպարէզ 'ի գայթակղութիւն բազմաց և 'ի նախատինս Քրիստոնէական սուրբ կրօնի։

Ապաքէն մեք որ յամենայն ժամ տքնիմք վասն հոգւոց 'ի Քրիստոս հաւատացեալ ժողովրդոց յանձնելոց մեզ 'ի տեառնէ և ջանամք պահել զանդորրութիւն Հօտին մերոյ, և պարծիմք Տէրամբ յԱռաքելական սուրբ Եկեղեցի մեր, որ 'ի ձեռն սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի հաստատեցաւ 'ի վէմն Քրիստոս. Եւ աղօթիւք բազմաչարչար նահատակի Ս. Գրիգորի մեծի Հայրապետի ցայսօր կայ անդրդուելի 'ի դըրանց դժոխոց ինքնուրոյն իրաւասութ̅, հարկ անհրաժեշտ համարիմք ծանուցանել Սրբազան Եղբայրութեան ձերում զգոյշ լինել 'ի հրաւիրմանէ անտի և 'ի ժողովոյ որ զրկեալ գտանի 'ի հիմանց օրինաւորութեան և զգուշացուցանել նաև զՍրբ եպիսկոպոսունս, և զամենայն Առաջնորդս վիճակաց և Եկեղեցեաց մերոց որ 'ի Տաճկաստան, չտալ տեղի շփոթից և տարաձայնութեան։

Եւ միաբան աղաչեսցուք յամ̅ սըրտէ, որպէս և միշտ աղաչեմքս, զի Գլուխն անկեան և խաղաղութիւն Եկեղեցւոյ սրբոյ Քրիստոս Փրկիչն ամենեցուն, որ արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ կոչելով զամենեսին 'ի միարտ Աւետարանական վարդապետութեան, պահեսցէ 'ի խաղաղութեան զեկեղեցի իւր սուրբ, և զԱզգս Հայոց պահպանեսցէ յանակնունելի փորձութեանց։

Ողջ լերուք զօրացեալ Տէրամբ։

Համար 31 (Ստորագրութիւն)
ի 11 Փետրվարի

---

յՕրագրութեանց Սինոդի Ս. Էջմիածնի.

Յունվ. — Գեր. Գրիգոր Սագինեանց և Սերովբէ Արարատեան Եպիսկոպոսունք, և Արք. Գրիգոր վարդա-

պետ Գառնակերեանց՝ ս. Աթոռոյս Տնտեսական կառավարութեան ժողովոյ անդամ նշանակեցան։ Իսկ պ. Վախ-տանգ Փարսադանեանց՝ յիշեալ ժողո-վոյ գործակատար կարգեցաւ։

Փետր. — Գեր. Անդրէաս Եպիս-կոպոս տէր Անդրէասեան Կ. Պօլսեցի Շամախւոյ վիճակին Հոգևոր Տեսուչ նշանակեցաւ։

" — Քանաքեռ գեղջ Հայոց ծխական դպրոցի վերատեսուչ Փարսա-դանեանց պ. Վախտանգի բարենպա-տակ ջանքով և Երևանայ փոխ—թե-մակալ Արժ. Մեսրովպ վարդապետի յորդորանօք՝ յիշեալ գեղջ Հայոց ժո-ղովուրդն սիրայօժար և միաբան ըղձա-նօք՝ իւրեանց գեղջ գինեվաճառութեան և մսավաճառութեան կրպակաց արդիւն-քը, ինչպէս նաև արդէն Եկեղեցական դրամագլխոց տոկոսիքը և այգեաց ու պարտիզաց արդիւնքը ընծայած են յօ-գուտ իւրեանց ծխական հոգևոր դըպ-րոցին։ Որոյ նաև ներքին և արտաքին պիտոյից կառավարութեան և յառաջա-դէմ զարգացման համար երկու Հոգա-բարձու ընտրելով պ. Յարութիւն Աժ-վաղեանցը և պ. Սողոմոն Յակոբեանցը՝ առաջարկած են Մեծ. Կաթողիկոսի, որ Նորին ս. Մեծափառութիւնն ևս մեծաւ սիրով բարեհաճեցաւ օրհնու-թեան կոնդակաւ հաստատել, և իւր գոհունակութիւնը յայտնել Քանաքեռ գեղջ Հայ ժողովրդեան այսպիսի ու-սումնասէր առատաձեռնութեանց համար։

Այսպիսի բարենպատակ առատա-ձեռնութեանց և ուսումնասէր մանա-ւանդ թէ Ազգասէր ջանից մասին որ-քան որ սիրելի է մեր ԱՐԱՐԱՏայ՝ զգալ բերկրապատար ուրախութիւն և մեծ շնորհակալութիւն, այնքան ևս անուշ քաղցր է յուսալ՝ որ յիշեալ գեղջ սա-կաւաթիւ՝ և ոչ—հարուստ Ազգայնոց եռանդը բարի օրինակ կը հանդիսանայ մեր համայն սիրելի Ազգայնոց։

---

Կ. Պօլսոյ Ազգային լրագրաց հրա-տարակութիւններից կ՚իմանանք թէ՝ Գեր. տ. Պատրիարքն Պօլսոյ՝ Ազգային կամօք հրաժարուած լինելով, մինչև վերաքրագրեալ Ազգ. Սահմանադրու-թեան վերահաստատութիւն, և նորՊատ-րիարքի ընտրութիւն՝ Պատրիարքական Տեղապահ կարգուած է Գեր. Արիս-տակէս ս. Արք եպիսկոպոս։

ԱՐԱՐԱՏը յիշեալ Գեր. Արքեպիս-կոպոսին նոր պաշտօնը շնորհաւորելով, և կարողութիւն և զօրութիւն բարե-մաղթելով յերկնից, միանգամայն կը բաղձայ որ՝ Նորին գերապատուութիւնը կարող հանդիսանայ մեր սիրելի Ազգայ-նոյ բարենպատակ կամքը և փափաքը նա-խամեծարելով, նորա վիճակը լաւ ընթա-ցից վերածել, և Ազգի և ս. Եկեղե-ցւոյ օգտաւէտ և անհրաժեշտ ծառա-յութեամբք իւր պարտաւորութեանց ճիշտ կատարման փառքը վայելելու ար-ժանանայ։

---